ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ԱՐԴԻ ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԸ

1990-2015 թթ.

Ժ. 01.02 «Նորագույն շրջանի հայ գրականություն»

մասնագիտությամբ

բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
Գագիկ Վահեի Խաչիկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
Ռուզան Բուլիկի Արիստակեսյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Միքայել Հրաչիկի Հայրապետյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. ապրիլի 9-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. փետրվարի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Արդի հայ կենսագրական վեպը. 1990-2015 թթ.» վերտառությամբ ուսումնասիրությունը նվիրված է անկախության շրջանի կենսագրական վեպերին: Նրանում փորձել ենք հանգամանալից ուսումնասիրել այն կենսագրավեպերը, որոնք ստեղծվել են մայր հայրենիքում և սփյուռքում: Արդի արևելահայ և արևմտահայ-սփյուքահայ կենսագրական վեպերը դիտարկել ենք ամբողջությամբ, քանի որ հայի համար գոյություն ունի մեկ միասնական հայրենիք՝ Հայաստանի Հանրապետություն, և մեկ լեզու՝ հայերեն, ուստիև երկու գրական լեզուներով ստեղծվող մեկ միասանական գրականություն: Ձգտել ենք ներկայացնել արդի հայ կենսագրական վեպը ամբողջությամբ՝ այն աղերսելով հայ և համաշխարհային գրականության ավանդույթների հետ: Այս առումով առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հատկապես կենսագրական վեպի ժանրային առանձնահատկությանը՝ փորձելով որքան հնարավոր է՝ հստակեցնել կենսագրական վեպի ենթաժանրի մասին պատկերացումները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր ուսումնասիրության ***առարկան*** արդի հայ կենսագրական վեպերն են՝ ստեղծված անկախության շրջանում՝ 1990-2015 թթ.: Ատենախոսության մեջ առաջին անգամ որոշակի ժամանակահատվածի ընդգրկումով (1990-2015 թթ.) հետևողականորեն ուսումնասիրվել և գրականագիտական վերլուծությամբ ներկայացվել են նշված տարիներին լույս տեսած կենսագրական վեպերը և՛ Հայաստանի Հանրապետությունում, և՛ Սփյուռքում: Ուսումնասիրության ***նպատակն*** ենք համարել տեսականորեն հնարավորինս ճշգրտել կենսագրական վեպի թեմատիկ, ժանրային, գաղափարագեղարվեստական և լեզվաոճական առանձնահատկությունները, դրա ինքնատիպ և տարբերակային դրսևորումներն արդի հայ գրականության մեջ, մասնավորապես մեզ հետաքրքրող ժամանակահատվածում:

Ատենախոսությունը գրելիս մեր առջև դրել ենք հետևյալ ***խնդիրները***.

- հանգամանորեն ուսումնասիրել կենսագրական վեպի տեսությունը,

- ներկայացնել կենսագրական վեպը՝ որպես վեպի առանձին ենթաժանր,
- ուսումնասիրելով հայ կենսագրական վեպը՝ համակարգել և արժևորել այն՝ ցույց տալով, թե ինչպես են արդի հեղինակ-կենսագիրները ներկայացրել նշանավոր մարդու գեղարվեստական կերպարը,
- վավերականի և գեղարվեստականի տիրույթներում՝ որքանով են ստեղծվել գեղարվեստական ուրույն արժեքներ,
- նպաստել կենսագրական վեպի հանրայնացմանը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կենսագրական վեպը և կենսագրական նախասկիզբը գնալով լայն տարածքներ է գրավում գրականության մեջ: Ինչպես նախկինում, հիմա էլ ստեղծվում են կենսագրական վեպեր, որոնց ***արդիականությունը պայմանավորված է***.

ա) նշանավոր մարդու[1] և ժամանակի,

բ) նշանավոր մարդու և միջավայրի,

գ) նշանավոր մարդու և նրա մարդկային ու գրական հարաբերությունների,

դ) նշանավոր մարդու, նրա անձնական կյանքի,

ե) նշանավոր մարդու կյանքի հայտնի և անհայտ էջերի վավերագրական-գեղարվեստական բացահայտումով,

զ) նշանավոր մարդու գեղարվեստական կերպարը համարժեք առանձնահատկություններով ճանաչելի դարձնելով:

Նշանավոր մարդու կերպարը, մասնավորապես արվեստագետի կերպարը՝ որպես մարդ և ստեղծագործող, ինքնին հետաքրքրական է և մշտապես ունի արդիական նշանակություն: Ամեն մի սերունդ ուսումնասիրում է անվանի արվեստագետի (գրող, գեղանկարիչ, երգահան և այլք) ստեղծագործությունները, հետևաբար նրան ավելի մոտիկից, գեղարվեստականի և փաստական-վավերագրականի

[1] Կենսագրական վեպեր հիմնականում ստեղծվում են գրողների և արվեստագետների մասին, սակայն նշանավոր մարդ ասելով՝ հասկանում ենք հասարակական ցանկացած միջավայրի գործիչ:

համադրմամբ վերստեղծած կերպարի հետ հաղորդակցվելու ցանկությունը չի կարող անտարբեր թողնել տվյալ անհատով հետաքրքրվողներին: «Քննադատության ու գրականության պատմության բնագավառում չկա, թերևս, ավելի հետաքրքրաշարժ, ավելի հաճելի և դրա հետ միասին ավելի ուսանելի ընթերցանություն, քան մեծ մարդկանց մասին լավ գրված կենսագրությունը»[2],-գրում է XIX դ. ֆրանսիացի նշանավոր քննադատ Սենտ Բյովը:

Ուսումնասիրությունը կարող է օժանդակել բանասիրական ֆակուլտետների դասախոսներին և ուսանողներին, ինչպես նաև հայ գրականության ուսուցիչներին՝ որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ ժամանակակից հայ գրականության դասընթացում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ուսումնասիրության մեջ փորձ է արվել առաջադված խնդրիներն ու հարցերը քննել ու մեկնաբանել հայ և համաշխարհային գրականագիտական մտքի շրջանակներում: Վերլուծական մոտեցումներում առաջնորդվել ենք համադրական սկզբունքով՝ փորձելով թափանցել գրական երկի ճանաչողական, արժեքային-իմաստաբանական և կառուցվածքային-լեզվապատկերային շերտերի խորքերը, բացահայտել նշված վեպերի բովանդակային բոլոր շերտերի գեղարվեստական ընդհանրությունը և նրա տեսական հայտարարը: Գեղարվեստական երկերը ուսումնասիրվել և խմբագրվել են ըստ ճանաչողական, մեկնողական, տեսական ընդհանրացման հայեցակարգերի:

Կենսագրական վեպերի վերլուծության ժամանակ կարևորվում են հատկապես հեղինակի ներկայացրած գեղարվեստական կերպարի հոգեբանության ճշգրիտ արտահայտությունը, հերոսի հոգեվիճակները՝ գիտակցական, ենթագիտակցական, անգիտակցական արտահայտություններով և կենսագրական գրականության համապատասխանությունը ժամանակի ոգուն ու պատմական ճշմարտությանը:

---

[2] Сент-Бёв Ш., Литературные портреты, Критические очерки, Москва, 1970, с. 47.

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Արդի հայ կենսագրական վեպին անդրադարձել են Սևակ Արզումանյանը (Պ. Զեյթունցյան, «Վերջին արևագալը»)[3], Ելենա Ալեքսանյանը (Պ. Զեյթունցյան, «Վերջին արևագալը»)[4], Սերգեյ Սարինյանը (գրել է Հայկազ Հակոբջանյանի կենսագրական վեպերի առաջաբանները)[5], Ժենյա Քալանթարյանը (Հայկազ Հակոբջանյանի և Ալեքսանդր Թոփչյանի կենսագրավեպերի համառոտ քննություն)[6], Սիրանուշ Մարգարյանը (Ալեքսանդր Թոփչյան, «Եվ անգամ մահից հետո» վեպը)[7], Դավիթ Գասպարյանը (գրել է Հովիկ Չարխչյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» վեպի առաջաբանը)[8], Զավեն Ավետիսյանը (Աշոտ Ավետիսյան, «Մենավորի աստղը կամ Վահան Տերյանի կյանքը»)[9], Գագիկ Խաչիկյանը (Հովիկ Չարխչյանի կենսագրական վեպերը և Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի» կենսագրավեպը)[10], Օֆելյա Հովհաննիսյանը (Հայկազ Հակոբջանյանի կենսագրական վեպերը)[11] և այլք:

---

[3] Արզումանյան Ս. , Արդի հայ վեպը, հ. 5, Երևան, ՀԳՄ հրատ., 2004 թ., 335-341:

[4] Ալեքսանյան Ե., Լուսաբացը չի կարող վերջինը լինել, Հայաստան, 1991, փետրվարի 27:

[5] Հակոբջանյան Հ., Սպիտակ էդելվեյսներ. Ռ. Սևակ, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 1997, 414 էջ, նույնի՝ Առկայծ ճրագ. Դանիել Վարուժան, Գյումրի, «Դպիր» հրատարակչություն, 2004, 304 էջ, նույնի՝ Ով մարդկային արդարություն. Սիամանթո, Երևան, ՀԳՄ հրատարակչություն, 2005, 313 էջ:

[6] Քալանթարյան Ժ., Ուրվագծեր արդի հայ գրականության, Երևան, «Զանգակ-97», 2006, էջ 122-127:

[7] Մարգարյան Ս., Կենսագրական վեպի սահմանը (Ալ. Թոփչյան. «Եվ անգամ մահից հետո») /Գրական զուգահեռներ, Երևան, 2009, 218-236:

[8] Գասպարյան Դ. Վ., Պարոյր Սևակի կյանքի վեպը / Հ. Չարխչյան, Սուլամիթա. Սևակի մեծ սերը, Ե., «Վան Արյան» հրատ., 2004 թ:

[9] Ավետիսյան Զ., Վեպ Տերյանի մասին, Երևան, «Առավոտ», 25.08.2011 թ:

[10] Խաչիկյան Գ., Կենսագրական վեպ ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու մասին/ Երևան, «Ազգ», 2017, օգոստոսի 18: **Նույնի**՝ Հովիկ Չարխչյանի կենսագրական վեպերը/ «Գրականագիտական հանդես», ԺԹ, 2019-2, Երևան, Արմավ, էջ 106-119:

[11] Հովհաննիսյան Օ., Հայկազ Հակոբջանյանի կենսասգրական վեպերի մի քանի առանձնահատկությունների մասին, / Միջազգային գիտաժողովի նյութերի

Սակայն արդի կենսագրական վեպերի մասին դեռևս ամբողջական գրականագիտական ուսումնասիրություն չի ստեղծվել: Ուստի նորույթ է այն, որ ոչ միայն արդի, այլև ամբողջ հայ գրականագիտության մեջ դեռևս չկա համակարգված ուսումնասիրություն կենսագրական վեպերի մասին, բացառությամբ Սևակ Արզումանյանի «Սովետահայ վեպը» ուսումնասիրության առանձին ենթագլուխների [հ. 1 («Պատմահեղափոխական և պատմակենսագրական վեպեր», էջ 379-463, Ե., 1967), հ. 3 («Մեծ անհատների դրաման: Պատմակենսագրական վեպը 50-70-ական թվականներին», էջ 254-294, Ե., 1986)]: Մեր ատենախոսությունից առաջ հրապարակի վրա չի եղել արդի հայ կենսագրական վեպին նվիրված ամբողջական, համապարփակ, համակարգային ուսումնասիրություն, ինչին էլ միտված է աշխատանքը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Նորագույն շրջանի հայ գրականության բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ուսումնասիության հիմնադրույթներն ու եզրահանգումները արտացոլված են ՀՀ գիտական հանդեսներում տպագրված հոդվածներում:

ժողովածու, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Երևան, «Միսմա» ՍՊԸ, 2018, էջ 243-249:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը (185 էջ) բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրված է աշխատանքի ընդհանուր բնութագիրը՝ ներառելով ատենախոսության հիմնական դրույթները: Ներկայացրել ենք նաև նյութի ուսումնասիրվածության աստիճանը, հիմնավորել աշխատանքի թեման, մեթոդաբանության ընտրությունն ու կառուցվածքի նպատակահարմարությունը, բնորոշել արդիականությունն ու նորույթը, պարզաբանել ատենախոսության նպատակներն ու խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1.1. Հայ և արտասահմանյան կենսագրական վեպի պատմությունից ու տեսությունից

Առաջին գլխի առաջին ենթագլխում հնարավորությունների սահմաններում քննել ենք կենսագրական վեպի տեսությունը և փորձել ենք հիմնավորել կենսագրական վեպի ակունքները, որ սկսվում է հույն գրող և պատմիչ Պլուտարքոսից (մոտ. 42- մոտ.123 թթ.): Նրա «Համեմատական կենսագրությունները» և՛ պատմավեպի, և՛ կենսագրավեպի նախատիպ է: Առաջին կենսագրական վեպ է գիտակցվում Քսենոփոնի (մոտ մ.թ.ա. 430-354) «Կյուրոպեդիա» աշխատությունը, հիշատակման արժանի է նաև Սվետոնիոսի «Տասներկու կեսարների կյանքը» գիրքը:

Ըստ գրականագետ Դավիթ Գասպարյանի՝ եթե ազատվենք զուտ պատմագիտական-վարքաբանական կարծրատիպից, նայենք գեղարվեստի պահանջով, Ագաթանգեղոսի «Պատմություն»-ը «բնույթով ***պատմակենսագրական վեպ է***»[12]: Կենսագրական վեպի նախօրինակներից են նաև միջնադարում եվրոպական քրիստոնեական գրականության մեջ ստեղծված վարքագրություններն ու վկայաբանությունները: Ուստի միջնադարյան վարքագրություններից Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և «Շուշանիկի վկայաբանությունը» հայ կենսագրական վեպի նախնական տարբերակ կարելի է համարել:

Կենսագրական վեպին [կենսագրավեպ, երբեմն՝ կենսավեպ (Սերգեյ Սարինյանն է օգտագործում՝ Ն.Կ.)] տարբեր անվանումներ են տրվել՝ ***գեղարվեստական կենսագրություն, կենսագրական վեպ, բելետրիստիկ կենսագրություն***, անգամ պատմավեպ, իսկ վերջին ժամանակներում ի հայտ է եկել կենսագրական վեպի նոր տարատեսակը՝ ***բանասիրական*** *կամ* ***գրականագիտական վեպը***:

---

[12] Գասպարյան Դ., Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2009, էջ 92, 94:

Բանասիրական վեպի մասին գրականագետների կարծիքները վիճահարույց են, բայց իրողություն է նաև նրա առանձին տարատեսակի ընդունումը[13]: Սուրեն Դանիելյանը Հակոբ Օշականի «Սահակ Պարգևյան» և «Մաթիկ Մելիքխանյան» կենսագրական վեպերը համարում է ***մշակութային վեպ***:

Փաստն այն է, որ կենսագրական վեպը, ինչպես ժամանակակից վեպը, զարգացող ժանր է: Ինչպես հայ վեպին առհասարակ, այնպես էլ արդի հայ կենսագրավեպին բնորոշ են ներժանրային թափանցումները: Արդի շրջանում հայ գրականության մեջ գրվել են զտարյուն կենսագրական վեպեր, ***կենսագրական վեպ-էսսե, չափածո կենսագրական վեպ***, նկատելի են նաև **բանասիրական վեպի** դրսևորումներ (նկատի ունենք մասնավորապես, Հայկազ Հակոբջանյանի կենսագրական վեպերը, Հովհաննես Մելքոնյանի «Մերժված օրենսդիրը»): Կենսագրական վեպի մեջ հանդիպում են նաև ***փիլիսոփայական, հոգեբանական*** վեպերի ներժանրային թափանցումներ, որոնք կենսագրական վեպը հարստացնում են համադրական տարրերով:

Կենսագրավեպը փաստավավերագրական նյութի հենքով գեղարվեստական ստեղծագործություն է: Այն նշանավոր մարդկանց մասին ստեղծված կենսագրության կամ կենսագրական ժանրի շարունակությունն է: Ուշագրավ է, որ փաստականի և գեղարվեստականի ճիշտ համադրման խնդիրը արդիական է: Այս տեսակետից կարևորում ենք 2008 թ. մայիսի 28-ին ՌԳԱ Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի այդ թեմայով քննարկումը[14]:

---

[13] Բանասիրական վեպի մասին տես՝ Ладохина О. Ф., Филологический роман как явление историко-литературного процеса XX века, Северодвинск, 2009, 187 с.

«Ժամանակակից ռուս գրականությունը XX դարավերջին և XXI դարասկզբին» ուսումնական ձեռնարկում բանասիրական վեպը, նաև գրողների հիշողությունները համարվում են 20-րդ դարավերջի երևույթ: Տես՝ Современная русская литратура конца XX- начала XXI века: учеб. Пособие для студ. Учреждений высш. проф. оброзования, Москва, Издательский центр «Академия», 2011, с. 34.

[14] Круглый стол «Литература и документ: теоретическое осмысление темы» http://imli.ru/seminary-i-konferentsii-2008/1827-kruglyj-stol-literatura-i-dokument-teoreticheskoe-osmyslenie-temy

Կենսագրական վեպում փաստական ճշգրտությունը միահյուսվում է վիպական պոետիկային: Սակայն փաստական ճշգրտությունը, որքան էլ կարևոր է, չի կարող չափանիշ դառնալ գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործության, եթե հայտնվել է անճարակ կամ գրողական շնորհքից զուրկ հեղինակի ձեռքում, եթե հեղինակը վավերական աղբյուրների մեջ չի կարողանում գտնել անհատին և ստեղծել իր հերոսի գեղարվեստական ճշմարիտ կերպարը և նրա հարուստ հոգեաշխարհը:

Կենսագրական վեպի ժանրային գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանում միահյուսված դրսևորվում են իրական, վավերական հիմքը գեղարվեստական հորինվածքի հետ: Այդ երկերի հերոսները, իրական անձնավորություն լինելով, գրողի կողմից գեղարվեստական մշակման են ենթարկվում, ինչի շնորհիվ այսպիսի վեպերում ստեղծվում են ուղղակի իմաստով իրական անձնավորությունների, նշանավոր մարդկանց գրական կերպարները: Նրանցում անպակաս են հեղինակների խոհերը, հրապարակագրական շեշտադրվածությունը, հեղինակների գրականագետ լինելու դեպքում՝ նաև բանասիրական վերլուծությունները:

Ներկայացնել ենք նաև մի շարք քննադատների, գրողների և գրականագետների կարծիքները կենսագրական վեպի մասին: Կարևորել ենք Բելինսկու, Դ. Ժուկովի, Մ. Բախտինի, Ա. Մորուայի, Ի. Սթոունի, Ջ. Ֆրոյդի, հայ քննադատներից Սևակ Արզումանյանի, Էդվարդ Ջրբաշյանի, Սուրեն Դանիելյանի՝ կենսագրական վեպի ժանրային առանձնահատկությունների մասին տեսակետները:

Կենսագրական վեպը դասական վեպերին բնորոշ դիպաշար չունի: Այս առումով Յուրի Մաննը կարևոր դիտարկում է արել. «Որքան էլ գիրքը «անսյուժե» թվա, խորապես ուսումնասիրելով այն, կգտնենք ինչ-որ միավորող, համակարգող և այն համաձույլ դարձնող բան»[15]: Կենսագրական վեպում դասական վեպին բնորոշ դիպաշարի կայուն բաղադրիչները (նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, գագաթնակետ, լուծում) ուղղակիորեն չեն դրսևորվում: Այդպիսի վեպում իրադարձությունները զարգանում են հիմնականում հերոսի կյանքի տարբեր շրջանները կամ հասակները (մանկություն, պատանեկություն,

---

[15] Манн Ю., Жанр больших возможностей, стр. 41-59 / Вопросы литературы, 1959, № 9, стр. 57.

երիտասարդություն, հասունություն, ծերություն, մահ) պատկերելու հաջորդականությամբ: Որոշ կենսագրավեպերում հերոսի կյանքը պատկերվում է երիտասարդության շրջանից, հնարավոր է նաև, որ հերոսի կյանքի մի քանի կարևոր դրվագներ ներկայացվեն: Այդպիսիք են, օրինակ, Հ. Չարխչյանի կենսագրական վեպերը, որոնցում ներկայացվում է գլխավոր հերոսի կյանքի մի փոքր դրվագ կամ կարճ ժամանակաշրջան:

Կենսագրական վեպի արմատները բավականին խորն են և, հնարավորինս հիմնավորել ենք նրա առանձին ենթաժանր լինելը, իհարկե, հիմք ընդունելով այն տեսակետը, որ գրականության մեջ գրեթե գոյություն չունի «մաքուր» ժանր: Իրավացի է գրականագետ Ժենյա Քալանթարյանը, երբ գրում է. «Ոչ մի ժանրի վերաբերյալ չի կարելի խիստ կայուն բաղադրատոմս առաջարկել և վերջնականապես որոշել սահմանները, քանի որ յուրաքանչյուր գրական երկ յուրահատուկ է և պայմանավորված է ինչպես գրողի առանձնահատկությամբ, այնպես էլ դարաշրջանով»[16]:

1.2. Արդի հայ կենսագրական վեպի խճանկարը: Այս ենթագլխում ներկայացրել ենք արդի հայ կենսագրական վեպի խճանկարը, թվարկել դրանք և ներկայացրել ընդհանուր օրինաչափությունները: Արդի հայ կենսագրավեպերի հերոսներ են դառնում հիմնականում գրողները[17], իսկ

[16] Քալանթարյան Ժ., Ժանրը սովետահայ գրականության ձևավորման շրջանում (Արձակ և դրամատուրգիա). Դասախոսություններ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1974, էջ 8-9:

[17] Ասենք, որ նույնն է նաև ռուս գրականության մեջ: «Ժամանակակից ռուս գրականությունը XX դարավերջին և XXI դարասկզբին» ուսումնական ձեռնարկում նշվում է, որ դարավերջին գրականության հերոս է դարձել ստեղծագործողը, գրողը, և թվարկվում են հետևյալ վեպերը՝ Սերգեյ Գանդլևսկի «Գանգի շաղափում», Անատոլի Նեյման, «Անփառունակ սերնդի փառավոր վախճանի մասին», Մարկ Խարիտոնով, «Ճակատագրի գծերը կամ Միլաշևիչի արկղիկը» (1992 թ. շնորհվել է Բուքերյան մրցանակ), Վլադիմիր Մականին, «Անդերգրաունդ կամ մեր ժամանակի հերոսը» (1999 թ. շնորհվել է Պետական մրցանակ): Տես՝ Совеменная русская литратура конца XX- начала XXI века. учеб. Пособие для студ. Учреждений высш. проф. образования, Москва, Издательский центр «Академия», 2011, с. 34. Տես՝ նաև Կ. Վոլկովի ատենախոսությունը: Волков, Кирилл Алексеевич, Биография писателя в творчестве Владимира Набокова 1930-х - начала 1940-х гг.

գրողի գեղարվեստական կերպարի արծարծումն առավել բարդ է: Ժամանակակից կենսագրական վեպերի համար հակահերոս գոյություն ունենալ չի կարող, և կենսավեպերը պահպանում են հերոսի մասին մեր դասական պատկերացումները: Այլ հարց է, թե հերոսները զրկվում են իրենց ավանդական «լուսապսակից»: Բարձրարժեք կենսագրական վեպերում մեծ գրողը ներկայանում է և՛ կենցաղային իրականության մեջ, և՛ հասարակական ու գրական կյանքում, բայց ոչ թե իբրև «մարմարյա արձան» (Անդրե Մորուա), այլ իրական մարդուն բնորոշ բնավորությամբ ու պահվածքով, մարդկային թուլություններով, զանազան գայթակղություններով և միայն իրեն բնորոշ բարձր արժանիքներով:

Հատկանշական է, որ 1990-2015 թվականներին ստեղծված կենսագրական վեպերը ներկայացնում են 20-րդ դարասկզբի հայոց պատմության նշանավոր դրվագները, և նրանց գլխավոր կերպարը այդ պատմական ժամանակաշրջանում գործած նշանավոր անհատներից մեկն է: Դրանց մեծ մասի հիմնական թեմատիկան հայոց ցեղասպանությունն է՝ Մեծ եղեռնը, կենտրոնական կերպարներն էլ՝ նահատակ գրողները: Սա ևս բնական է, որովհետև նրանք հայոց պատմության ամենաողբերգական ժամանակաշրջանի վկաներն են և զոհերը: «Չհիշեմ, չպատմեմ, չխոսեմ, չպատժեմ՝ դավաճանում եմ ինձ, բոլորին և իրեն՝ թշնամուն... Չհիշելով, չպատմելով, չպատժելով՝ ես նրա լկտիությունը պատիժ եմ դարձնում բոլորի համար, և ոչ ոք ինձ շնորհակալ չի լինելու, և թշնամին ինքը շնորհակալ չի լինելու»[18],-նկատում է Հրանտ Մաթևոսյանը:

Առանցքային թեմաներից է նաև խորհրդային ժամանակաշրջանում ապրած մարդկանց կյանքը: Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» վեպում է միայն ներկայացված պատմության մի քիչ ավելի վաղ ժամանակաշրջան ու միջավայր՝ միջնադարյան Հայաստանը, և հերոս է ընտրված աշուղ-բանաստեղծ Նահապետ Քուչակը:

Արդի կենսագրական վեպերում ինքնատիպ գործառույթ ունի նաև վերնագրերի ընտրությունը: Վերնագրերն ընտրվում են հետևյալ սկզբունքով՝

1. ***Վերնագիրը ժանրի ցուցիչ է:***

("Дар", "Истинная жизнь Себастьяна Найта", "Николай Гоголь"), дис., Москва, 2013, 363 с.

[18] Մաթևոսյան Հ., Սպիտակ թղթի առջև, Երևան, «Հայագիտակ», 2004, էջ 310:

Այդ սկզբունքը կարևորում է հատկապես Հայկազ Հակոբջանյանը և իր երկերի պարագայում պարտադիր նշում է՝ «կենսագրական վեպ» կամ «կենսապատում», Աշոտ Ավետիսյանը «Մենավորի աստղը կամ Վ. Տերյանի կյանքը», Բակուրը՝ «Շուշեցու հիշատակարանը»:

2. ***Վերնագիր է ընտրվում գեղարվեստական հերոսի ստեղծագործություններից:***
   Այդ մոտեցումն առկա է միայն Հայկազ Հակոբջանյանի վեպերի մեջ՝ «Սպիտակ էդելվեյսներ. Ռուբեն Սևակ» (Սևակն ունի «Էտելվեյս» վերնագրով քերթված), «Առկայծ ճրագ» (Դանիել Վարուժան), «Ով մարդկային արդարություն» (Սիամանթո), «Կյանքս այնպես դժվարին էր. Վահան Տերյան»:
3. ***Զգացական կամ հոգեբանական զուգորդություն առաջացնող վերնագրեր:***
   «Վերջին արևագալը» (Պերճ Զեյթունցյան), «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» (Աննա Պետրոսյան), «Եվ անգամ մահից հետո» (Ալեքսանդր Թոփչյան), «Մենակը» (Աշոտ Աղաբաբյան), «Մենավորի աստղը կամ Վ. Տերյանի կյանքը» (Աշոտ Ավետիսյան):
4. ***Գլխավոր հերոսի անունով:*** «Շիրազ-Նամե» (Վազգեն Առաքելյան), «Արշիլ Կորքի» (Սարգիս Վահագն):
5. ***Մասնագիտություն մատնանշող:*** Աղասի Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության», Աշոտ Աղաբաբյան, «Ռեզիդենտը»:

Ժամանակակից վեպի, մասնավորապես կենսագրական վեպի դեպքում հիմնական ուղղությունը գոյության (էքզիստենցիայի) փիլիսոփայության դիտանկյունից հերոսի կյանքի իմաստավորումն է: Այս խմբին կարելի է դասել Պերճ Զեյթունցյանի «Վերջին արևագալը» և Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» կենսագրավեպերը: Իսկ Հովիկ Չարխչյանի կենսագրական վեպերը («Սուլամիթա. Պարույր Սևակի մեծ սերը», «Չարենցի կրակոցը») որոշակի առնչություններ ունեն հոգեբանական վեպերի հետ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԻ ԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Գեղարվեստականի և վավերականի համադրության տիրույթներում», անդրադարձել ենք լավագույն գրական ավանդներ ստեղծող բարձրարժեք գեղարվեստական կենսագրավեպերին:

2.1. ***Պերճ Զեյթունցյանի ‹‹Վերջին արևագալը» վեպը***: «Վերջին արևագալը» (1990) ազդարարում է հայ կենսագրավեպի արդի փուլի սկզբնավորումը: Այն արժեքավոր ձեռքբերում է այս ժանրատեսակի հետագա զարգացման համար՝ ստեղծելով ամուր և հեռուն տանող նախադրյալներ:

Պերճ Զեյթունցյանն ընտրել է արևմտահայ նշանավոր գործչի՝ նշանավոր գրող, «Նորավեպի իշխան» Գրիգոր Զոհրապի կյանքը, որի կերպարը իր ողջ կենսագործունեությամբ բնութագրում է նրա ապրած ժամանակաշրջանը: «Վերջին արևագալը» ինքնատիպ կենսագրական վեպ է, որի մեջ համադրվել են բազում գաղափարագեղարվեստական շերտեր: ***Այն ներկայացնում է բավականին մեծ ժամանակահատված՝ 19-րդ դարի վերջին քառորդից մինչև Մեծ եղեռնը:*** Վեպի գործողությունները զարգանում են ոչ թե ֆաբուլայի, այլ սյուժեի տրամաբանությամբ:

‹‹Վերջին արևագալը» վեպում հերոսների հոգեվիճակներում և փոխհարաբերություններում գերակայում է դրամատիզմը: Հերոսի մենախոսությունը հաճախ միջոց է հեղինակի խոհերի արտահայտման համար և վերածվում է հեղինակի արտաքին մենախոսության:

Վեպում հեղինակն արծարծում է գոյության փիլիսոփայության առանցքային հարցադրումներ՝ ***խղճի մենախոսության, ընտրության, մարդու մենության*** խնդիրները: Ուշադրություն ենք դարձրել վեպի բանարվեստին, որի կարևոր բաղադրիչներից են իրերի և առարկաների հեղինակային մեկնաբանությունները: Առարկաների/արտաքին աշխարհի պատկերումը ճանապարհ է դեպի ենթագիտակցական աշխարհ:

Վեպում հոգեբանական ուրույն խորությամբ են ներկայացված ոչ միայն Զոհրապը և իր մտերիմները, այլև հայոց ցեղասպանության

գլխավոր կազմակերպիչներից Թալեաթը, որի ներքին նողկալի էությունը բացառիկ խորաթափանցությամբ ու դիպուկությամբ է բացահայտվել, մասնավորապես, ռուսական բանակի առաջխաղացման ազդեցության հետևանքով: Այդ պահին նա խորհում է նույնիսկ կնոջը գերի թողնել ռուսներին, որպեսզի վերջինս հակառակորդի մեջ իր նկատմամբ կարեկցանք առաջ բերի: Հեղինակ-կենսագիրը վեպում ընդլայնել է գեղարվեստական մտահղացման սահմանները, որպեսզի ցույց տա. «ազգային միասնության ձևավորման ու պետության կառուցման տարբեր հայեցակարգեր, դատապարտելու մարդկության դեմ գործվող ոճիրները՝ առաջին հերթին ոչ թե հուզական, այլ քաղաքական համատեքստում»[19]:

2.2. Ռուբեն Սևակի գեղարվեստական կերպարը

Եղեռնազոհ գրող Ռուբեն Սևակի կերպարն արծարծվել է երեք կենսագրական վեպերում: Ա. Ծառուկյանի «Սէրը եղեռնին մէջ» (1987) հուշագրական վեպի արձագանքներով, Հ. Հակոբջանյանը և Ա. Թոփչյանը գրեցին իրենց կենսագրական վեպերը, ուստի անդրադարձել ենք նաև Ծառուկյանի կենսագրավեպին:

Հ.Հակոբջանյանի «Սպիտակ էդելվեյսներ» **(1997)** կենսագրավեպում Ռուբեն Սևակի ոդիսականը ներկայացվում է որպես գեղեցիկ լեգենդ՝ սիրո, նվիրումի, կարոտի, սպասման ու երջանկության որոնման: Գրողը ներկայացնում է Սևակի կյանքը, մարդկային ապրումները, առասպելի վերածված սերը և ողբերգական վախճանը:

Վեպի գեղարվեստական տիրույթը հարստացել է Ռ.Սևակի բանաստեղծությունների վկայակոչումներով: Նման մոտեցումը կենսագրական վեպում արդարացված է, քանի որ բանաստեղծի կյանքի էական մասը կազմում են նրա ստեղծագործությունները և սերը սիրելի կնոջ հանդեպ: Իսկ այս ամենը ներկայացված է արևմտահայության ճակատագրի վայրիվերումների համապատկերում:

Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպը զուտ կենսագրական վեպ չէ. այն միաժամանակ կարող է դիտարկվել և՛ փիլիսոփայական վեպ (վեպում կոմպոզիցիան համադրվում է հեղինակի փիլիսոփայական գաղափարների արծարծումների հետ), և՛ պատմավեպ (կենսագրական վեպը հատկապես անցյալի գրականագիտության մեջ

---

[19] Մութաֆյան Լ., Պերճ Զեյթունցյանի ժամանակը, Երևան, «Լուսաբաց», 2014, էջ 128:

դիտարկվում էր որպես պատմավեպի ենթաժանր), և՛ քաղաքական վեպի տարրեր են նրանում առկա՝ քաղաքական իրադարձությունների խոր և համակողմանի վերլուծությամբ:

Թոփչյանը կարողացել է ինքնատիպ կերպով մեկնաբանել Ռուբեն Սևակի և՛ ստեղծագործական աշխարհը՝ չմատնելով իր՝ գրականագետ լինելու հանգամանքը, և՛ նրա կերպարի հոգեբանությունը: Թոփչյանի վեպում դասական վեպի ավանդույթները համադրված են գոյության փիլիսոփայության (էքզիստենցիալիզմ) և գրականության որոշակի սկզբունքներով, և հեղինակը կերպարները ներկայացնում է այդ տրամաբանությամբ: Հեղինակի փիլիսոփայական հայեցակարգը հիմնականում արտահայտված է վեպի առաջին գլխում, որի կառուցվածքային բաղադրիչներից է խորհրդանշական դրվագների ստեղծումը (կոմսուհի Էլիզի և ընկնավոր Լիզետի հանդիպումները):

Հարուստ է վեպի բանարվեստը: ***Հայելու, անդրադարձման, ստվերի և երկվորյակի*** արքետիպերը ինքնատիպ մեկնություն են ստանում վեպում: Կոմսուհի Ալիսը Ռուբենին նմանեցնում է իր ազգականին կամ Կոնրադի արվեստանոցում առաջին անգամ Ռուբենը տեսնում է մերկ կնոջ գայթակղիչ նկար, ում դեմքը ծածկված էր հովհարով, որի վրա պատկերված էր Ուտամարոյի էրոտիկ տեսարաններից մեկը: Հովհարը հենց ***դիմակի/անձի*** արքետիպն էր խորհրդանշում, որ բացահայտում էր նկարում պատկերած կնոջ էությունը՝ ամբողջովին սեր և կիրք/էրոս: Հերոսին հանդիպած երկու կանանց՝ ***Լիզ****եպի* և կոմսուհի *Ալիս*(**զ**)ի անունների արտաքին նմանությունը ասես հայելու անդրադարձներ լինեն: Վեպում հերոսի հիշողության կամ ենթագիտակցության մեջ մնացած ***պատկերի/ ստվերի/ անդրադարձման*** տպավորությունը կյանքի մեջ մահվան, կործանման ու ոչնչացման անխուսափելիության, ճակատագրականության արտահայտություններ են: Նույն կերպ է դիտարկվում նաև վեպի վերջին մասում ավստրիացի աղջկա ենթասյուժեն: ***Լեռը/բլուր/ստինք*** գաղտնագիր է դառնում հերոսի հոգեաշխարհի բացահայտման համար: Գրողը լեռը դիտարկում է որպես սիրո և մահվան հանդիպման վայր (այն հոգեվերլուծության մեջ կայուն արքետիպ է դարձել), նաև անձի հոգևոր հասունացման խորհրդանիշ: Ապագա բանաստեղծը, հաղթահարելով դժվարությունները, բարձրանում է լեռը՝ քաղելու նրա ծերպին աճած միակ ծաղիկը: Նրա առջև բացվում է մութ ու զազրելի իրականությունը. կակաչի մեջ որդեր էին հաստատվել:

Լեռը ներկա է հերոսի ենթագիտակցության մեջ. «Դա ճանապարհն է դեպի Աստված, դեպի կատարելություն»[20]: Լեռը հաղթահարելով՝ Ռուբենը պիտի հաղթահարի իրեն, պիտի կատարելագործվի, որպեսզի ցույց տա ճանապարհը, իսկ իր պարագայում դա Գողգոթայի ճանապարհն էր՝ ինքնազոհաբերումը:

Բոլոր նշված վեպերում բանաստեղծի գրական կերպարը նույնական է Ռուբեն Սևակի իրական մարդկային նկարագրին, բայց Ալեքսանդր Թոփչյանի կենսագրավեպը առանձնանում է իբրև գեղարվեստական բարձրաժեք ստեղծագործություն:

2.3. Աղասի Այվազյանի «Պոեմ վասն շենքի և շինության» վեպը

Աղասի Այվազյանի «Պոեմ վասն շենքի և շինության» վեպի ժանրային բնորոշումը հեղինակային է՝ պոեմ: Վեպի կառուցվածքային կարևոր բաղադրիչներից է գործողությունների դինամիկան, ինչը պայմանավորված է կյանքի արագ և անսպասելի ռիթմով, նրա ընթացքով, պտույտով ու շրջապտույտով, և այդ հորձանքի մեջ հեղինակը ներառել է Երևանի գլխավոր հատակագծերի կազմող հայ նշանավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի կյանքը: Նրա կյանքի միջոցով էլ ներկայացրել է հայ մարդու կյանքը, որը համապատասխանում է ոչ թե մեկ մարդու ապրած ժամանակաշրջանին, այլ «Մենքի»՝ ի՛մ, քո՛, հա՛յ ժողովրդի անցած ու ներկա պատմության ժամանակներին:

Այվազյանը Թամանյանի կերպարը զարգացնում է դիպաշարային-կառուցվածքային ինքնատիպ միջոցներով և հնարքներով: Այս տեսանկյունից հետաքրքիր գրողական գյուտ պիտի համարել Անիի վարպետ կառուցողներից մեկի՝ Արամի[21] գերդաստանի պատմությունը: Վեպի նմանօրինակ «ճարտարապետության» մասին հետաքրքիր

---

[20] Թոփչյան Ա., Եվ անգամ մահից հետո, Երևան, ՀԳՄ, 2005, էջ 65:

[21] Հավաստի չենք կարող ասել, թե արդյոք Արամ անունով ճարտարապետ եղել է Անիում: Հավանաբար Արամ անունը հեղինակային է ՝ որպես ամենատարածված և տիպիկ հայկական անուն: Ըստ Խորենացու՝ Արամի անունով օտարները մեր երկիրը կոչում են Արմենիա: Արամը Խորենացու ամենասիրած արքաներից էր. «Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ, Արամ, Տիգրան, որովհետև քաջերի սերունդները քաջեր են»: Տես՝ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն / Թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, խմբ.՝ Գ.Սարգսյան/, Երևան, Հայաստան, 1990, ԺԳ գլուխ, էջ 29:

դիտարկում է արել ռուս գրականագետներից Նիկոլայ Ռիմարը. «Երկխոսական հարաբերություններ ծագում են ոչ միայն իրար մասին չմտածող, մինչև անգամ իրար չճանաչող հերոսների գիտակցության մեջ, այլև հեղինակի գիտակցության մեջ <...>. այդպիսի դիպաշար անհրաժեշտ է հեղինակին որպես կապակցման միջոց իր մտահղացման համար»[22]:

Վեպի բանարվեստային համակարգում որոշակի գործառույթ են կատարում գունային խաղարկումները և հատկապես կարմիրի երանգավորման հեղինակային ինքնատիպ ընկալումները: Կարմիրը՝ որպես արյան ու ավերի խորհրդանիշ, ժանգը (=ժանգագույն)՝ որպես լերդացած կարմիր արյան այլ նրբերանգ և գույնզգույնը՝ անհեթեթության, կեղծ փայլի, ստի խորհրդանիշ:

Լինելով նաև նկարիչ՝ հեղինակը ուշադրություն է դարձնում խոսքի տեսողական պատկերներին՝ վեպն օժտելով նաև գրաֆիկական ռիթմով (կշռույթ)՝ երբեմն գրելով մուգ տառատեսակով, առանձնացնելով և ընդգծելով ասելիքի կարևորությունը: Հատկապես ուշարժան է վեպի վերջնամասում Թամանյանի և Աղասի Խանջյանի մահվան մասին ակնարկող «չոր թվականների» (Ե. Չարենց) հիշատակումը:

Աղասի Այվազյանի «Պոեմ վասն շենքի և շինության» վեպը նվիրված է ոչ միայն Ալեքսանդր Թամանյանին, այլև հայ ժողովրդին ու յուրաքանչյուր արարող հայի: «Պոեմ վասն շենքի և շինության» կենսագրավեպը անցյալի գրական լավագույն ավանդների շարունակությունն է: Այն ինքնատիպ է նաև արդի հայ կենսագրական վեպերի շարքում:

2.4. ***ՀՈՎԻԿ ՉԱՐԽՉՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԵՐԸ («Սուլամիթա. Սևակի մեծ սերը», «Չարենցի կրակոցը»):*** «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» կենսագրական վեպի գլխավոր հերոսը Պարույր Սևակն է՝ իր սերերով և Սուլամիթան, որ եղավ նրա «վերջինը թյուրիմացաբար, բայց և միակը ճակատագրով»: Պարույր Սևակի և Սուլամիթա Ռուդնիկի նամակները բավականին հարուստ

[22] Рымарь Н., Поэтика романа, Издательство Саратовского университета, Куйбишевский филиал, 1990, 254 с.

տեղեկություններ են պարունակում: Նրանցում բացահայտվում են նաև բանաստեղծի գեղագիտական հայացքները[23]:

Վեպը բավականին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Պարույր Սևակի կյանքի մասին: Այնուհանդերձ, այն գեղարվեստական տեսանկյունից կաղում է: Այսպես՝ Հովիկ Չարխչյանը, Սուլամիթային ներկայացնելով որպես Սևակի մեծ սեր, պիտի կարողանար գեղարվեստորեն հիմնավորել այն: Չարխչյանի հերոսները՝ Պարույրն ու Սուլամիթան, լիարժեք գրական կերպարներ չեն դառնում, այլ մնում են իրական-վավերական կերպարների շրջանակում: Իրական է նրանց կյանքը, իրական են արարքները, իրական են նամակները, պարզապես հեղինակը սոսկ արձանագրող է: Ուստի՝ ***Չարխչյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» երկը կենսագրական-արձանագրական վեպ է:***

«Չարենցի կրակոցը» (2010): Վեպը պատմում է Չարենցի հայտնի կրակոցի և «Ուղղիչ տան» մասին: Բանաստեղծը այդ դեպքերի մասին գրեց իր «Երևանի Ուղղիչ տնից» հուշակնարկում: Չարխչյանի վեպի միջոցով ընթերցողը ոչ միայն իմացնում է կրակոցի մասին, այլև հիմնավորվում են դրա հոգեբանական դրդապատճառները: Հովիկ Չարխչյանի «Չարենցի կրակոցը» կենսագրավեպը գեղարվեստական ինքնատիպ ստեղծագործություն է և հեղինակի ստեղծագործական երևակայության արդյունք: Ընթերցողը գիտակցում է, որ հեղինակը գեղարվեստական երևակայության միջոցով է ստեղծել վեպը, սակայն գիտակցում է նաև այն, որ Չարենցի կյանքում իրոք եղել են հեղինակի ներկայացրած դեպքերը, ուստի կարևորվում է, թե ինչպես են դրանք պատմվում: Ընթերցողը ներգրավվում է դեպքերի զարգացման ընթացքի մեջ, զգում, տառապում, «համագործակցում» է գրական հերոսի հետ:

Այսպես, Հովիկ Չարխչյանը գրել է երկու կենսագրավեպ, որոնցից վերջինը ձեռքբերում է դառնում արդի գրականության համապատկերում: Սևակի մասին գրած կենսագրավեպը փաստագրական վեպի դրսևորում է, իսկ «Չարենցի կրակոցը» կենսագրավեպում երևում է գրողը:

---

[23] Պարույր Սևակի թոռ Պարույր Ղազարյանն այլ կարծիքի է և գտնում է, որ Սուլամիթան Սևակի մեծ սերը չէ և նույնիսկ վիրավորական է, որ Սևակի լավագույն երկերը կապվում են Սուլամիթայի հետ: Այդ մասին տես՝ 2020թ. հունիսի 26-ին «Ազգ» օրաթերթին տրված հարցազրույցում: https://www.azg.am/AM/2020062611

2.5. ***Կենսագրական վեպ արդի սփյուռքահայ գրականության մեջ: Սարգիս Վահագն, «Արշիլ Կորքի»:*** Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի» վեպը քննելիս կարևորել ենք այն իրողությունը, որ վեպը գրված է սփյուռքահայ հեղինակի կողմից և հայապահպանման ու ազգային արժանապատվության զգացմունքներ արթնացնելու նպատակին է միտված: Հեղինակն «Արշիլ Կորքի» վեպով շարունակում էր գրական այս տեսակի ուղղությամբ ստեղծված ավանդույթները: ԱՄՆ-ի գեղանկարչության պատմության մեջ 1920-1930-ական թթ. նոր-նոր ստեղծված ուղղության՝ էքսպրեսիոնիստական աբստրակցիոնիզմի սկզբնավորման գործում մեծ ներդրում ունեցած հայ արվեստագետի կյանքն ու ստեղծագործությունը ընթերցողներին է ներկայացնում կենսագրական վեպի գեղարվեստական ուրույն աշխարհի տիրույթում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՊՐՈՏԱԳՈՆԻՍՏԻ ԴԺՎԱՐԻՆ ՃԱԿԱՏԱԳԻՐՆ՝ ԻԲՐԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԶԴԱԿ

Աշխատանքի երրորդ՝ «Պրոտագոնիստի դժվարին ճակատագիրն՝ իբրև ստեղծագործական ազդակ» գլխում ներկայացրել ենք այն կենսագրական երկերը, որոնց ստեղծագործական ազդակ է հանդիսացել պրոտագոնիստի (գլխավոր հերոս) դժվարին ճակատագիրը: Այս խմբում ներառված վեպերը գեղարվեստորեն թույլ են և հիմնականում փաստագրական են կամ մնում են որպես գրապատմական իրողություն:

3.1. Հայկազ Հակոբջանյանի կենսագրական վեպերը: Հայկազ Հակոբջանյանը ավանդների շարունակող է, և նրա չորս կենսագրական վեպերից երեքը նվիրված են եղեռնազոհ գրողներին (Ռ. Սևակ, Դ.Վարուժան, Սիամանթո): Հեղինակի գեղագիտական համակարգում գրողների կենսապատումը մարդկային ամենանուրբ զգացմունքների և սիրո միջոցով պատկերելն է: Ընդհանրապես Հակոբջանյանը լավ է տիրապետում սիրային սյուժեների կառուցմանը, ինչն ինքնատիպ հմայք է հաղորդում նրա վեպերին: Հակոբջանյանի կենսագրական վեպերը, ինչպես նկատել է գրականագետ Ժենյա Քալանթարյանը, «մի տեսակ միջին տեղ են գրավում գիտական-գրականագիտական, հուշագրական ու գեղարվեստական երկերի միջև»[24]:

Հակոբջանյանի կենսագրական վեպերը հիմնականում փաստագեղարվեստական են կամ փաստական: Նրա ամենալուրջ թերացումներից մեկը կարող ենք համարել «փաստագրության գերաճը», երբ վեպերն ավելի շատ նմանվում են «գրականագիտական մոնտաժի» (Սերգիևսկի): Գրականագետը փաստանյութի մեջ խեղդել է գրողին, և գործը տուժել է: Իսկ Ռուբեն Սևակին («Սպիտակ էդելվեյսներ. Ռ. Սևակ») և Սիամանթոյին («Ով մարդկային արդարություն. Սիամանթո») նվիրված վեպերը ստացվել են, որովհետև փաստը չափավոր է օգտագործվել:

3.2. Վահան Տերյանի կերպարը կենսագրական վեպերում: Տերյանի մասին ստեղծվել է երկու կենսագրական վեպ: Հայկազ Հակոբջանյանի «Կյանքս այնպես դժվարին էր» վեպում նշմարվում են

---

[24] Քալանթարյան Ժ., Ուրվագծեր արդի հայ գրականության, Երևան, 2006, 124-125:

բանասիրական վեպի որոշակի տարրեր, բայց բանասիրական վեպերում գրող-գրականագետի դիտարկումները համաձուլվում են վեպի գեղարվեստական հյուսվածքին: Աշոտ Ավետիսյանի «Մենավորի աստղը» վեպը զուտ կենսագրական ենք համարում: Հեղինակներից յուրաքանչյուրն իր ձևով և պատկերացումներով է ստեղծել Տերյանի գեղարվեստական կերպարը: Հակոբջանյանի երկն ուղղորդված է Տերյանի զգացմունքների աշխարհի արտահայտմանը և թերի է թողնում նրա գրական ճաշակի ձևավորումն ու զարգացումը: Ավետիսյանը ստեղծում է գրողի լիարյուն, ամբողջական կերպարը: Ընթերցելիս Ավետիսյանի կախվածությունը սկզբնաղբյուրներից չի նկատվում. երկն ընկալվում է որպես ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություն: Ավետիսյանի վեպն ավելի բարձր ենք դասում Հակոբջանյանի վեպից, բայց որպես գեղարվեստական գործ՝ կատարյալ չէ:

3.3.Պարույր Սևակի կերպարը Հովհաննես Մելքոնյանի «Մերժված օրենսդիրը» վեպում: Մելքոնյանի վեպ-էսսեն մոտ է բանասիրական վեպին. հերոսը և՛ գրող/բանաստեղծ է, և՛ բանասեր, իսկ գիրքը ոչ միայն Պ. Սևակի կենսապատումն է, այլև նրա ստեղծագործական աշխարհի գրականագիտական քննություն: Գիրքը վերապահությամբ կարող ենք համարել կենսագրական վեպ: Մելքոնյանը բանաստեղծի մահը կապում է Սևակի շուրջ ստեղծված բացասական վերաբերմունքի և հատկապես «Եղիցի լույս» ժողովածուի արգելման հետ:

Հովհաննես Մելքոնյանի «Մերժված օրենսդիրը» վեպը կարևորել ենք որպես Պարույր Սևակի ժամանակակցի դիտարկում:

3.4. ***Կերպարի գունազարդումն ու «կազմաքանդումը»:*** Այս ենթագլուխում անդրադարձել ենք Վազգեն Առաքելյանի «Շիրազ-Նամե» և Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» վեպերին: Եկել ենք այն եզրակացության, որ ժամանակակից կենսագրական վեպերը երբեմն «տառապում են» իրենց գլխավոր հերոսին «աստվածացնելու» միտումով: Այս առումով ***Վազգեն Առաքելյանի «Շիրազ-Նամե»*** չափածո կենսագրական վեպը գովաբանության, ձոներգության նմուշ է. ձևեր, որ այժմ կիրառելի և ընդունելի չեն[25]:

---

[25] Լևոն Մութաֆյանը, ելնելով ինչ-ինչ հանգամանքներից, հակառակն է փաստում և չափազանց բարձր է գնահատել «Շիրազ-Նամե» վեպը, որն անընդունելի ենք համարում: Տես՝ Մութաֆյան Լ., «Շիրազ-Նամե»-ն որպես չափածո վեպի նոր իրողություն: / «Գրական թերթ», 10/12/2014:

Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» վեպը նվիրված է միջնադարյան բանաստեղծ Նահապետ Քուչակին:

Այգեպան Սարգսի որդին՝ Նահապետը, սիրում է այծարած Նանե աղջկան: Նրա սիրած աղջկան ամուսնացնում են հարուստ վաճառականի հետ: Նահապետը թողնում է հորն ու այգին և հեռանում է Ակնից: «Այն պահին, երբ կերպարը հայտնվում է այլ տարածության մեջ, այլևս կորցնում է իր ինքնությունը»[26],- նկատում է Ք. Հովհաննիսյանը «Տան բացակայության փոխաբերությունը արդի հայ արձակում» հոդվածում: Հզոր անհատի կերպարը դառնում է ոչ թե առաջնորդողի և իր հետևից տանողի կերպար, այլ խեղճ, լալկան, կամազուրկ մի հերոս:

Այսպիսով, կենսագրական վեպի դեպքում ինչպես անընդունելի է կերպարի փառաբանումը, այնպես էլ կերպարի վավերականության քայքայումը, այլ կերպ՝ հարմարեցումը:

3.5. ***Աշոտ Աղաբաբյանի կենսագրական վեպերը («Ռեզիդենտը», «Մենակը»): «Ռեզիդենտը»*** (2004, 2014) գիտագեղարվեստականության և փաստագրության համաձուլվածք է: Վեպը պատմում է հայազգի նշանավոր հետախույզ և քիմիկոս Հայկ Բաղալի Հովակիմյանի (1898-1967) մասին: Հեղինակը ընթերցողների լայն շրջանակների համար բացահայտում է Հովակիմյան-ռեզիդենտին (հետախուզության պետ), գիտնականին, արվեստասերին և մարդուն: Վեպը գրված է բեմարկի ոճով: Կարճ, բայց խոսուն գլուխները չափազանց տպավորիչ են: Հեղինակն ասես ջանք չի թափել. պարզապես ներկայացրել է եղելությունը: Բնական պատումը որոշակիորեն ապահովում է վեպի գեղարվեստականությունը:

Գիրքն ունի ակնառու թերություններ: Գլխավոր հերոսը՝ Հայկ Հովակիմյանը, կարելի է ասել, գեղարվեստական կերպար չի դառնում, որովհետև գրեթե չի տարբերվում մյուս գործող անձանցից: «Ռեզիդենտը» վեպի նորույթը առավելապես թեմատիկան էր, իսկ գեղարվեստական տեսակետից փոքր-ինչ կաղում է: Վահրամ

---

[26] Հովհաննիսյան Ք., Տան բացակայության փոխաբերությունը արդի հայ արձակում: https://www.cultural.am/hy/26-gradaran/tester/303-qristine-hovhannisyan-tan-bacakayutyan-poxaberutyuny-ardi-hay-arcakum // Տպագրվել է 2004 թ. № Ա Գրականագիտական հանդեսում, էջ 186-196:

Դանիելյանը իրավացի է, որ «ոճերի հիբրիդային սերտաճումների արդյունքում հեղինակի երկակի խաղից»[27] գիրքը տուժել է:

«Մենակը» (2013) կենսագրական վեպում ներկայացվում է Գրիգոր Գուրզադյանի կյանքի պատմությունը: Գուրզադյանը վեպում Առնո Սարոյան անունով է պատկերված: «Մենակը» վեպը գեղարվեստորեն ավելի հասուն է, և հեղինակը կատարելագործել է գրողական ձիրքը: Հեղինակը ժլատ խոսքով, երբեմն նույնիսկ ակնարկի միջոցով տիպիկ է պատկերում ժամանակաշրջանը: Գուրզադյանը վեպում Առնո Սարոյան անունով է ներկայացված: Վեպը տարակարծությունների տեղիք տվեց: Զորի Բալայանը «Գրական թերթ»-ում հանդես եկավ «Հերյուրանքը հորինվածք չէ կամ արջի ծառայություն» հոդվածով[28], որտեղ արտահայտում էր իր և Գուրզադյանի հարազատների վրդովմունքը[29]: Իրողությունն այն է, որ այլ բան է փաստական իրականությունը, այլ է գեղարվեստական ճշմարտությունը:

Կենսագրական վեպի կարևոր առանձնահատկություններից մեկը փաստական ճշմարտության հենքով գեղարվեստական ճշմարտության բացահայտումն է: Բայց գրողների առջև միշտ էլ առկա են դժվարությունները. փաստին տուրք տալու դեպքում նրանք դառնում են ընդամենը վերապատմող՝ զրկվելով ստեղծագործական գյուտի հնարավորությունից: Այս առումով կարող ենք ասել, որ «Մենակը» վեպում հեղինակն օգտվել է ստեղծագործական երևակայությունից: Ինքնատիպ է ստացվել Մանեի կերպարը, որը Առնո Սարոյանի կերպարին հաղորդում է քնարականություն: Ուշագրավ է նաև «վեպ վեպի մեջ» գեղարվեստական հնարանքը: Վեպի վերջում Սարոյանը գրում է ինքնակենսագրական վեպ, կրկնվում է նախաբանը: Նա հերոսի անվան կիրառման անհրաժեշտությունը չի տեսնում. թեկուզ կարող է անվանել Աշոտ Աղաբաբյան: Սա փաստում է, որ վեպը նվիրված է ոչ

---

[27] Դանիելյան Վ., Արդի հայ վեպը 1991-2008 թթ., Երևան, 2009 / Ատենախոսություն, «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագ., բան. գիտ. թեկ: Ժ. 01.02, էջ 40:

[28] Բալայան Զ., «Հերյուրանքը հորինվածք չէ կամ արջի ծառայություն», «Գրական թերթ», 7.05.13

[29] Հետաքրքրականն այն էր, որ հոդվածը գրելու ընթացքում նկատեցի, որ երբ երկրորդ անգամ գիրքը պատվիրեցի, օրինակի վրայից ջնջել էին Գրիգոր Գուրզադյանի անունը:

միայն Գուրզադյանին, այլև ցանկացած մեկին, ով մենակ է ու չհասկացված:

3.6. ***Բակուրի «Շուշեցու հիշատակարանը» վեպը***

Բակուրը «Շուշեցու հիշակարանը» համարում է պատմավեպ, ըստ վեպի գրախոս Հ. Առուշանյանի՝ պատմակենսագրական վեպ՝ չնայած հոդվածագիրը մինչև վերջ չի հաստատում այդ ժանրատեսակը[30]: Մենք հակված ենք այն դիտարկելու կենսագրական վեպի տիրույթում: Հեղինակը վեպն անվանել է «Շուշեցու հիշատակարան» և հիմնականում կառուցել է վերհուշի գեղարվեստական հնարքով:

Գիրքը Արցախի պատմության համար ունի հանրագիտարանային նշանակություն: Վեպն ունի նաև ժողովրդագրական, կենցաղագիտական, ազգագրական նշանակություն, իսկ Արցախի չափարյան խոսվածքի օգտագործումը հերոսների խոսքն ավելի պատկերավոր է դարձնում՝ ապահովելով միջավայրի կոլորիտը: Վեպում իշխում է փաստականությունը, նկարագրականությունը, և այն ունի ճանաչողական նշանակություն:

Ատենախոսության գիտական արդյունքներն ամփոփել ենք հետևյալ ***եզրակացություններում.***

1. Հայ և արտերկրի գրականագետների ու կենսագիր-հեղինակների կարծիքների համադրումը բերում է այն եզրակացության, որ կենսագրավեպը վեպի առանձին ենթատեսակ է, որն ունի կառուցվածքային, բովանդակային և գաղափարագեղարվեստական ուրույն առանձնահատկություններ: ***Կենսագրական վեպը փաստավավերագրական նյութի հենքով գեղարվեստական ստեղծագործություն է:*** Այն նշանավոր մարդկանց մասին ստեղծված կենսագրության կամ կենսագրական ժանրի ուրույն դրսևորումն է: Այս տիպի երկերը բավականին դժվար են կայանում, քանի որ հեղինակից պահանջվում է ոչ միայն վավերական նյութի մանրակրկիտ ու խոր ուսումնասիրություն, այլև այդ ամենի գեղարվեստական հմուտ վերացարկում: Կենսագրավեպում կարևորվում է գրողի՝ փաստից օգտվելու հմտությունը, և միայն օժտված հեղինակներն են կարողանում ստեղծել բարձրարժեք գեղարվեստական երկեր:

---

[30] Առուշանյան Հ., «Շուշեցու հիշատակարանը» / Գրական թերթ, 27. 10. 2013 թ.

2. Կենսագրական վեպին [կենսագրավեպ, երբեմն՝ կենսավեպ (գրականագետ Սերգեյ Սարինյանի եզրույթը՝ Ն.Կ.)] տարբեր անվանումներ են տրվել՝ ***գեղարվեստական կենսագրություն***, ***կենսագրական վեպ***, ***բելետրիստիկ կենսագրություն***, անգամ պատմավեպ, իսկ վերջին ժամանակներում ի հայտ է եկել նոր տարատեսակը՝ ***բանասիրական*** կամ ***գրականագիտական վեպը***:
3. Կենսագրավեպում գլխավոր հերոս դարձած նշանավոր գրողների, արվեստագետների, անվանի մարդկանց անհատական ճակատագրերով յուրովի բացահայտվում են նրանց ապրած պատմական ժամանակաշրջանի ազգային, հասարակական, գրական կյանքի բազում էական կապերը: Դրան նպաստում է վեպի այս ենթատեսակի գեղարվեստական ներքին բաղադրիչների հարստությունը, բազմաշերտությունը: Կենսագրական վեպն իր ժանրային բաղադրիչների մեջ յուրովի ներառում է պատմական ժամանակաշրջանի ուրվագծումը, հոգեբանական, հուշագրական, ինքնակենսագրական, փիլիսոփայական, բանասիրական և այլ վեպերին բնորոշ հնարքներ:
4. Կենսագրական վեպը, ինչպես ժամանակակից վեպը, զարգացող ժանր է: Արդի հայ գրականության մեջ գրվել են ***կենսագրական վեպ-էսսե***, ***չափածո կենսագրական վեպ***, նկատելի են նաև ***բանասիրական վեպի*** որոշակի դրսևորումներ (նկատի ունենք, մասնավորապես, Հայկազ Հակոբջանյանի կենսագրական վեպերը, Հովհաննես Մելքոնյանի «Մերժված օրենսդիրը»): Կենսագրական վեպի մեջ հանդիպում են նաև ***փիլիսոփայական և հոգեբանական*** վերլուծություններ, որոնք կենսագրավեպը հարստացնում են համադրական տարրերով: Դրանք առնչակցվում են պատմավեպերին, ինքնակենսագրական, բանասիրական, հոգեբանական, փիլիսոփայական վեպերին, հուշագրությանը և այլն: Սակայն համադրականությունը շատ դեպքերում չի դառնում գեղարվեստականության նախապայման՝ մնալով լոկ տարբեր ոճերի միահյուսում:
5. Արդի շրջանը կենսագրական վեպերի համար կարելի է համարել զարթոնքի շրջան: Այն առաջին հերթին կապվում է Պերճ Զեյթունցյանի անվան հետ, որն էլ ըստ էության բերում է թեմատիկ և գաղափարագեղարվեստական «նորույթը»՝ եղեռնի թեմայի արծարծումը կենսագրակավեպի տիրույթում, որ այդ ժամանակաշրջանում հասարակական տրամադրությունների

արտահայտություն էր և պայմանավորված էր ազգային զարթոնքով ու արցախյան շարժումով:

6. Մեր դիտարկած կենսագիր-հեղինակներից յուրաքանչյուրն իր հերթին զարգացնում է կենսագրական վեպի մեջ յուրահատուկ մի ուղղություն՝
   - Պերճ Զեյթունցյանն ու Ալեքսանդր Թոփչյանը՝ փիլիսոփայական վեպի ուղղությունը,
   - Աղասի Այվազյանն ուշադրություն է դարձրել վեպի պոետիկային (բանարվեստ)՝ համադրելով հայ ժողովրդի հարատևության մասին իր խոհերն ու զգացմունքները,
   - Հովիկ Չարխչյանը փորձում է զարգացնել հոգեբանական ու հոգեվերլուծական ուղղությունը,
   - Սփյուռքում ստեղծագործող Սարգիս Վահագնը դասական ավանդների շարունակող է:

Նկատելի է նաև, որ արդի որոշ կենսագրավեպեր, ունենալով հուշագրական բնույթ, զերծ չեն ենթակայական վերաբերմունքից և գրված են անձնական-կենսագրական տպավորությամբ: Այս տեսակետից Հովհաննես Մելքոնյանի «Մերժված օրենսդիրը» վեպում իշխում է հրապարակագրական կիրքը, իսկ Վազգեն Առաքելյանի «Շիրազ-Նամե» վեպում՝ պաթետիկ ոճն ու հերոսի անթույլատրելի «աստվածացումը»:

7. Կենսագրական վեպերի մի մասը դասական վեպի շարունակությունն է, և ժամանակի ընթացքում քիչ փոփոխությունների է ենթարկվել: Շատերն ըստ էության շարունակում են դասական կենսագրավեպերի ավանդույթները՝ պատմությունն սկսելով հերոսի տոհմաբանությունից կամ ծնունդից և հասնելով մինչև մահը: Այս առումով հիշատակելի է Հայկազ Հակոբջանյանը:

Հատկանշականն այն է, որ ինչպես Բակունցի հերոսը (Խաչատուր Աբովյան), այնպես էլ արդի կենսագրավեպերի հերոսները, հակառակ կյանքի դժվարին հանգամանքներին, վերադառնում են հայրենիք՝ ծառայելու ժողովրդին ու ազգին: Այս առումով միակ բացառությունը Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» վեպն է:

Հետազոտության բովանդակությունն արտացոլված է ատենախոսի հրատարակած հետևյալ հոդվածներում.

1. Նահապետ Քուչակի կենսապատումը /Կանթեղ: Գիտական հոդվածներ, Երևան, 2017, 2 (71), էջ 17-25:
2. Վահան Տերյանի կերպարը կենսագրական վեպերում: / ՇՊՀ Գիտական տեղեկագիր, № 1, պրակ Բ, Հումանիտար և հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ, Գյումրի, 2017, էջ 21-32:
3. Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի» կենսագրական վեպը /Հայագիտական հանդես, № 4 (38), Երևան, 2017, էջ 91-98:
4. Կենսագրական վեպի տեսության և պատմության հարցեր: Արդի հայ կենսագրական վեպի մերօրյա արտահայտությունը / «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում», V միջազգային գիտաժողով, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան, Երևան, «Միսմա ՍՊԸ», 2018, էջ 223-233:
5. Աշոտ Աղաբաբյանի կենսագրական վեպերը («Ռեզիդենտը», «Մենակը») / Հայագիտական հանդես, № 3(41), Երևան, 2018 էջ 59-70:
6. Ռուբեն Սևակի վիպական կերպարը / Հայագիտական հանդես, 2 (44), Երևան, 2019, էջ 125-139:
7. Պերճ Զեյթունցյանի «Վերջին արևագալը» կենսագրական վեպը / Գրականագիտական հանդես Ի, Երևան, 2020, էջ 146-160:

КАРАХАНЯН НАРИНЕ АРУТЮНОВНА

СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ БИОГРАФИЧЕСКИЙ РОМАН

1990-2015 гг.

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 "Армянская литература новейшего периода".

Защита диссертации состоится 9-го апреля 2021 года, в 12:30 на заседании специализированного ВАК 003 "Литературоведение" при Институте литературы имени М. Абегяна по адресу: Ереван, ул. Григора Лусаворича, 15.

РЕЗЮМЕ

Предметом нашего исследования являются биографические романы, созданные на Родине и в диаспоре в период независимости. Современные восточноармянские и западноармясько-диаспорские биографические романы рассмотрели в целом, так как у армян одна общая Родина - Республика Армения, один язык - армянский, и поэтому одна общая литература созданная на двух литературных языках.

В главе **«Вопросы истории и теории. Краткий очерк»** всесторонне изученны мнения известных литературоведов и известных биографов о поджанре биографического романа. Пришли к выводу, что биографический роман- это самостоятельный поджанр романа, как бы он ни проникал в другие типы романов (исторический роман, филологический роман, психологический роман, мемуары, особенно автобиографические романы и т.д.)

В главе **«В области сочетания художественности и документальности литературы»** мы рассмотрели ценные художественные биографические романы, создающие лучшие литературные традиции. Оригинальные биографические романы, входящие в эту группу, привносят новаторскую свежесть в традиционные рамки, для них характерны элементы философских и психологических романов, широкий охват исторического периода.

Роман Перча Зейтунцяна «Последний рассвет» (1990) знаменует «рождение» современного армянского биографического романа. В

биографической книге, посвящённой Григору Зохрабу, автор изображает довольно длительный период, от последней четверти XIX века до Геноцида. В романе рассматриваются различные проблемы философии существования: человеческое одиночество, жизненный выбор, онтологические страхи и т.д.

Образу писателя жертвы геноцида Рубена Севака после А. Царукяна обратились А. Акопджанян и А. Топчян. В биографическом романе Акопджаняна «Белые эдельвейсы» в основном сохранены традиции классического романа, а Топчян сочетает классическое и современное. Произведение «И даже после смерти»-сочетательный роман. В нём мы в тоже время видим элементы и философского романа, и исторического романа, и политического романа. Мы обратили внимание на оригинальное использование архетипов в романе: горы-холмы-груди, зеркала, отражения, тени, близнеца, отца.

Произведение Агаси Айвазяна «Поэма о здании и строительстве» развивает традиции поэтического романа. В романе, посвящённом главному архитектору Еревана Александру Таманяну, автор объединил свои мысли и чувства о бессмертии армянского народа.

Овик Чархчян развивает психологическое и психоаналитическое направление. Как протагонист выбирая знаменитых армянских поэтов Паруйра Севака («Суламита: большая любовь Севака») и Егише Чаренца («Выстрел Чаренца»), автор пытается интерпретировать их внутренний мир, что удаётся особенно в романе «Выстрел Чаренца».

Роман армянского писателя из диаспоры Саргиса Ваагна «Аршил Горки» направлен на сохранение армянской идентичности и пробуждения чувства национального достоинства.

В разделе **«Трудная судьба протагониста как творческий сигнал»** мы рассмотрели произведения Айказа Акопджаняна, Ашота Аветисяна, Оганеса Мелконяна, Ашота Агабабяна, Анны Петросян, Вазгена Аракеляна и Бакура.

Биографические романы А. Акопджаняна в основном остаются в рамках документальности.

Биографический роман А. Аветисяна «Звезда одинокого или жизнь Ваана Теряна» мы считаем весьма удачным с точки зрения изображения целостного характера героя и новых сторон жизни и характера героя книги.

Новизна биографического романов («Резидент», «Одинокий») А. Агабабяна во многом заключается в выборе неизвестного широкой публике или малоизвестного главного героя (разведчика, учёного).

Роман-эссе «Отвергнутый законодатель» Мелконяна ценен как наблюдения современника Паруйра Севака.

Для биографических романов недопустимы как идеализирование образа (В.Аракелян, «Шираз-Наме»), так и разрушение документальности (А.Петросян, «Любовь обиженаная на мир- уходит»).

В романе «Записи жителя Шуши» Бакура через трудную жизнь главного героя Рубена Саргсяна представляет собой отражение тяжёлого периода в истории Арцаха, особенно резни в Шуши, на судьбу и психологию протагониста.

KARAKHANYAN NARINE HARUTYUN

MODERN ARMENIAN BIOGRAPHICAL NOVEL

1990-2015

The abstract of the dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences on the specialty 10.01.02 - "Modern Period of Armenian Literature".

The defense of the dissertation will be held on April 9, 2021 at 12:30 pm, at the Specialized Council of Literary Criticism 003 of NAS, RA, acting at the Institute of Literature after M. Abeghyan.

Address: The Republic of Armenia, Yerevan, Grigor Lusavorich street 15. The dissertation can be found in the library of the Institute of Literature after M. Abeghyan NAS, RA.

SUMMARY

The subject of our study is the biographical novels of the period of independencewhich were created both in the motherland and in the Diaspora.We have observed the Biographical novels of modern Eastern Armenian,Western Armenian- Diaspora Armenianentirety as there is one united homeland for an Armenian - the Republic of Armenia,and one language – Armenian;hence an indivisible literature created with two literary languages.

In the chapter **"The Questions of the History and Theory. Brief overview"** the opinions of the prominent literary critics, famous biographerson the subgenre of a biographical novel have been comprehensively studied. We have come to the conclusion that a biographical novel is an independent subgenre of a novel, no matter how noticeable are the penetrations of other types of novel (historical novel, philological novel, psychological, memoirs and, in particular, autobiographical novels, etc).

In the chapter **"In the Domains of the Combination of Fiction and Authenticity"** we have touched upon high-quality fiction biographical novels which create the best literary contributions. The original biographical novels included in this group with the traditional ones bring innovative freshness

and they are typical to the elements of both philosophical and psychological novels and a wide coverage of the historical period.

Perch Zeytuntsyan's novel "The Last Dawn" (1990) announces the "birth" of a modern Armenian biographical novel. In the biographical novel dedicated to Grigor Zohrap the author depicts a rather long period: from the last quarter of the 19th century until the Great Genocide and the protagonist of the novel with all his vital activity described the period of his life. The novel deals with various problems of the philosophy of existence: of human loneliness, the choice of the life, ontological fears, etc.

H. Hakobjanyan and Al. Topchyan, after A. Tsarukyan, referred to Ruben Sevak's character who was a genocide victim writer. In the biographical novel "White Edelweiss" by Hakobjanyan are mainly preservedthe contributions of the classical novel, while Topchyan combined the classical and the modern. The work "And Even After Death" is a synthetical novel. At the same time, we see elements of both a philosophical novel, a historical novel and a political novel in it. We have paid attention to the original use of archetypes in the novel: mountain / hill/ breast, of the mirror, the reflection of, of the shadow, the twin's, father's.

The work "Poem about Building and Construction" by Aghasi Ayvazyandevelops the traditions of the poetic novel. The author combined his thoughts and feelings about the longevity of the Armenian people in the novel dedicated to the chief architect of Yerevan, AlexanderTamanyan.

Hovik Charkhchyan develops the psychological and psychoanalytic directions. In his biographical novels the author has chosen as protagonists,outstanding Armenian poets Paruyr Sevak "Sulamita. The Great Love of Sevak" and Yeghishe Charents "Charents's Shot". In these works H. Charkhchyanis trying to interpret literary characters' inner worldwhich he succeeded in the novel "Charents's Shot".

The novel "Arshile Gorky" by Diaspora Armenian author Sargis Vahagnis aimed to preserve the Armenian identityand to evoke feelings of national dignity.

In the chapter **"The Difficult Fate of the Protagonist as a Creative Impulse"**the works by Haykaz Hakobjanyan, Ashot Avetisyan, Hovhannes Melkonyan, Ashot Aghababyan, Anna Petrosyan, Vazgen Arakelyan and Bakur have been studied.

The biographical novel by H. Hakobjanyan basically emains with in the framework of the documentary.

We consider the biographical novel “The Star of the Lonely Man or Vahan Teryan ’s Life” by A. Avetisyan to be quite successful in terms of introducing the full nature of the heroand the new aspects of his life and character.

The novelty of biographical novels: "The Rezident", "The Loneiy" by A. Aghababyan is mainly the choice of protagonist, unknown or little known to the public (a spy, a scientist).

"The Rejected Legislator" novel-essay by H. Melkonyanis valuable as a contemporary observation of Paruyr Sevak.

It is unacceptable for biographical novels both the glorification of the character (V. Arakelyan, "Shiraz-Name") and the destruction of authenticity (A. Petrosyan, " Love leaves the World Perturbed ").

“The Diary of a Shushi Resident” by Bakur presents a difficult period in the history of Artsakh through the hard life of the protagonist Ruben Sargsyan, particularlyafter the massacres in Shushireflectingupon human destiny and psychology.